Կառուցում

ԱՊՐԻԼ 5 - 15 2014 Թ. ԹԻՎ 8 (2030)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

... ՀՀ կառավարությունը շարունակում է գյուղատնտեսության ոլորտին մատչելի վարկերի տրամադրման քաղաքականությունը, որին ձեռնամուխ է եղել 2011 թվականին: 2011-2013 թթ. տրամադրվել է 54.7 մլրդ դրամ ընդհանուր գումարով մատչելի (14 տոկոսով) վարկ, որի 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ առավել անբարենպաստ 225 համայնքների համար՝ 6 տոկոսային կետը: 2013թ. երկու փուլով տրամադրվել է շուրջ 22.5 մլրդ դրամի վարկային միջոց: Կառավարության նիստում, նախկին որոշման փոփոխությամբ, տոկոսադրույքի սուբսիդավորմամբ վարկերի տրամադրման ժամկետը 2014թ. համար սահմանվել է ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

... ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստման և ախտորոշիչ հետազոտությունների ծրագիրը: Այն մշակվում և հաստատվում է ամեն տարի և նպատակ ունի երկրում պահպանել հակահամաճարակային կայուն վիճակը, միջոցներ ձեռնարկել բրուցելոզ, տուբերկուլոզ, սիբիրախտ, դաբաղ և մի շարք այլ հիվանդությունների դեմ: Ըստ ծրագրի՝ այս տարի ևս անհրաժեշտ չափաքանակներով ձեռք կբերվեն անասնաբուժական պատվաստանյութեր, ախտորոշիչ միջոցներ և ախտահանիչներ, կիրականացվեն հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ: Ծրագրի բյուջեն հաշվարկվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան անցկացված մրցույթների արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և կապալառու ընկերության միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

... Նիստում հաստատվել է նաև կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության ծրագիրը, որի համաձայն, Արարատի և Արմավիրի մարզերում, ֆերոմոնային թակարդների օգնությամբ, կճշտվեն նշված վնասատուների քանակը, դրանց դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման ժամկետները:

Ֆոտո ԳԱՀԿ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանն ընդունել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային ներկայացուցչի տեղակալ, Հայաստանում ՊԳԿ-ի ներկայացուցիչ Անտոնիո Ալոնզիին:

Ընդգծելով մեր երկրում ՊԳԿ-ի կողմից իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի արդյունավետությունը՝ նախարարի պաշտոնակատարը ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար առանձնակի կարևորություն ունեցող հիմնահարցերը, որոնց լուծման մեջ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ակնկալում է ՊԳԿ-ի օժանդակությունը:

Նշվել է հատկապես սպանդանոցների կառուցման, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման, ծիրանի և խաղողի սորտերի պահպանման և օգտագործման, գյուղատնտեսական մթերքի իրացման շուկաների կազմակերպման ծրագրերի կարևորությունը: Որպես հրատապ աջակցության խնդիր է ներկայացվել վերջին ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների վնասների փոխհատուցման գործում ՊԳԿ-ի հնարավոր օժանդակության ակտիվացումը:

«Մեզ համար հրատապ խնդիրներից է մնում նաև Արարատյան հարթավայրի ձկնաբուծական տնտեսություններում ջրի խնայողական համակարգերի ներդրման անհրաժեշտությունը»,- նշել է նախարարի պաշտոնակատարը՝ խնդրելով հնարավորինս արագացնել այս հարցում ՊԳԿ-ից ակնկալվող աջակցությունը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար և հավաստիացնելով, որ պատրաստ է նպաստել FAO-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի իրականացման արդյունավետությանը՝ պարոն Ալոնզին, կազմակերպության քննարկմանը ներկայացնելու նպատակով, խնդրել է մանրամասն հիմնավորումներ տրամադրել վերոնշյալ հիմնահարցերի վերաբերյալ:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐՆ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանը շարունակում է այցելությունները մարզեր՝ ցրտահարության հետևանքով ստեղծված իրավիճակին և առկա խնդիրներին տեղերում ծանոթանալու նպատակով: Ա. Գևորգյանը, գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանի, մարզպետ Կովալենկո Շահգալդյանի ուղեկցությամբ, այցելել է Կոտայքի մարզի Քանաքեռավան, Մրգաշատ համայնքներ, եղել ցրտահարությունից տուժած այգիներում, հանդիպել բնակիչների հետ:

Վերջիններս ներկայացրել են ստեղծված իրավիճակի հետ կապված իրենց մտահոգությունները, որոնք վերաբերում էին վարկային պարտավորություններին, մատչելի ոռոգման ջրով ու սերմացուով ապահովելու խնդիրներին:

Փոխվարչապետն ու նախարարը տեղեկացրել են, որ նշված բոլոր հարցերը քննարկվում են, և առաջիկա օրերին արդեն կհստակեցվեն աջակցության մեխանիզմները: Հանձնարարվել է նաև գարնանային սելավային ջրերն ինքնահոս համակարգերի միջոցով հասանելի դարձնել գյուղացիական տնտեսություններին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ անհրաժեշտ սերմացուի տեսակների և ծավալների, պարարտանյութի լրացուցիչ պահանջարկի մասին հաշվարկները համայնքապետերը կներկայացնեն մարզպետարան:

ՀՅՈՒՍԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքային այցը Գեղարքունիքի մարզ ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը սկսել է մարզխորհրդի նիստին մասնակցելով: Իր ելույթում նա անդրադարձել է 2013 թվականի գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշներին և գյուղում իրականացված պետական օժանդակման ծրագրերին: «Բարեբախտաբար գյուղացուն սատարելու այս քաղաքականությունը տարեցտարի ավելի նյութական ու նպատակային է դառնում: Մատչելի գներով սերմացու, պարարտանյութ, դիզվառելիք, ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելուց բացի, կառավարությունը կարողանում է որոշակի ֆինանսական փոխհատուցում տալ նաև բնական աղետից տուժած համայնքներին»,- ասել է նախարարի պաշտոնակատարը՝ հիշեցնելով, որ միայն գյուղացուն օժանդակելու չորս ծրագրով, պետությունը 4,5 միլիարդ դրամով սուբսիդավորում է իրականացրել:

«Գյուղատնտեսությանն առնչվող բոլոր խնդիրները, ինչպես և նախկինում, այսօր նույնպես, հանրապետության ՀՀ նախագահի ամենօրյա ուշադրության կենտրոնում են: Վերջին հանձնարարականը, որ տրվել է նախագահի կողմից, Հայաստան ներկրված գարու սերմացուն, նախատեսված 200-ի փոխարեն, 130 դրամով գյուղացիներին տրամադրելու մասին է»,- նշել է նախարարի պաշտոնակատարը:

Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրներին՝ նա համայնքապետերի ուշադրությունը հատուկ հրավիրել է մարզում կարտոֆիլի ցանքերի ավելացման անհրաժեշտությանը, մանավանդ, որ կարտոֆիլի իրացման խնդիրներ այսօր չկան, և վաճառքի գներից էլ գյուղացիները գոհ են: Կարևորվել է նաև տեխնիկական հավաքակայանի թարմացումն ու համալրումը: «Վերջին մեկ տարվա ընթացքում տարբեր ծրագրերով, հանրապետություն են ներկրվել և լիզինգային եղանակով գյուղացիներին տրամադրվել 200-ից ավելի տարբեր հզորության տրակտորներ»,-ասել է Սերգո Կարապետյանը:

☞2

1 ✍

ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այնուհետև՝ նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վանիկ Հովհաննիսյանին և ֆերմեր Վանիկ Հարությունյանին՝ Գանձակ համայնքից: Մարզի գյուղատնտեսության ևս 12 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

Օրվա երկրորդ կեսին նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը, մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղեկցությամբ, այցելել է Սիրականյան եղբայրների Վարդաձոր համայնքում գտնվող կաթնապրանքային ֆերման և կատոֆիլի պահպանության պահեստարանները, ծանոթացել արտադրությանն ու զրուցել աշխատակիցների հետ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ Է

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվել է մարտի 30-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մարզերում տեղի ունեցած ցրտահարությունից փուժած համայնքների վնասը փոխհատուցելու մասին ՀՀ կառավարության որոշման իրականացման հարցը:

Ներկայացնելով որոշմամբ սահմանված միջոցառումները՝ օգնության ձևերն ու դրանց հատկացման կարգը՝ նախարարի պաշտոնակատարն առաջնահերթ է համարել սերմերով ապահովվածության գործընթացի արագացումը: Հանձնարարվել է շուտափույթ ավարտել սերմերի գների հնարավոր իջեցման մասին պայմանավորվածությունները ներկրողների հետ, հստակեցնել սերմերի պահանջարկի վերջնական ծավալներն ու ապահովել դրանց ձեռքբերման աշխատանքները: Նշված բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն մինչև ապրիլի 15-ը, երբ պարտադիր պետք է սկսվի բաշխման գործընթացը: Անհրաժեշտ է բաշխման գործընթացին ակտիվորեն ներգրավել ԳԱՄԿ-երի աշխատակիցներին: Գյուղացիական տնտեսություններին անհապաղ տեղեկացնել, որ ՀՀ նախագահի հանձնարարությամբ, գարնանացան գարու սերմացուի գինը 200 դրամից իջեցվել է 130 դրամի, ապահովել բաշխման գործընթացի թափանցիկությունը լրատվամիջոցների և շահառուների համար: Օրակարգային հաջորդ հարցը կարտոֆիլի և լոլիկի ցեցի դեմ օգտագործվող ֆերոմոնային թակարդների ձեռքբերման և բաշխման, ինչպես նաև խաղողի ֆիլոքսերայի դեմ տարվող պայքարի միջոցառումների իրականացման մասին էր: Նշված աշխատանքների արագացման համար, նախարարի պաշտոնակատարը հանձնարարականներ է տվել պատասխանատուներին և ծառայությունների ղեկավարներին:

ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը խորհրդակցության էր հրավիրել «Հայաստանի թռչնաբույծների միություն» ՀԿ-ի նախագահ Սերգեյ Ստեփանյանին և խոշոր թռչնաբուծարանների ղեկավարներին՝ քննարկելու առաջիկա Զատկի տոնին տեղական արտադրության ձվով բնակչության պահանջարկը բավարարելու, ձվի նախատոնական առևտրի կազմակերպման, վաճառքի գների փոփոխություններ թույլ չտալու հարցերը:

Արտադրողների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, ապրիլ ամսին ձվի օրական արտադրությունը շուրջ 150.000 հատով գերազանցում է սպառման մակարդակը: Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում ոլորտում նկատվում են աճի և զարգացման անշրջելի միտումներ: Հանրապետություն է ներկրվել ընդհամենը 2.9 մլն ձու, որը զգալիորեն պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ընդ որում, ներկրված ձվի վերջին խմաբաքանակը Հայաստան է մտել գրեթե մեկ ամիս առաջ: Հանրապետությունում ձևավորված ձվի գներն ամենացածրն են տարածաշրջանում:

Շահագրգիռ քննարկման արդյունքում արտադրողները հավաստիացրել են Սերգո Կարապետյանին, որ ոչ միայն նախատոնական օրերին, այլև դրանից հետո ոլորտում խնդիրներ չեն լինի:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

ՎՆԱՍԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀՀ կառավարությունն արձանագրել է, որ 2014թ. մարտի 30-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ մարզերում տեղի ունեցած ցրտահարության՝ հետևանքով մարզերի մի շարք համայնքներին պատճառված վնասը հասել է աղետալի աստիճանի՝ ստեղծելով արտակարգ իրավիճակ:

Այդ վնասը մեղմելու նպատակով, հրատապ անհրաժեշտություն է առաջացել գյուղատնտեսական մշակաբույսերի սերմացուի վաճառքով զբաղվող տնտեսվարողներից ձեռք բերել փարբեր մշակաբույսերի սերմացու և հատկացնել ՀՀ մարզպետարաններին՝ ցրտահարությունից առավել փուժած համայնքների հողօգտագործողներին տրամադրելու նպատակով: Սերմացու ձեռք բերելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարին թույլատրվել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվեհամարից օգտագործել 85 մլն դրամ: Նույն ՊՈԱԿ-ի միջոցով սերմացուն տրամադրվելու է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններին, որոնք, 10-օրյա ժամկետում, համայնքների ղեկավարների միջոցով, սերմացուն, ըստ բաշխացուցակի, հասցնելու են հողօգտագործողին:

Պատճառված վնասը մեղմելու նպատակով, կառավարության հաջորդ որոշմամբ, 2014թ. գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրով, հողօգտագործողներին տրամադրվող գարնանացան գարու սերմացուի գինը 200 դրամից իջեցվել է 130 դրամի: Բացի այդ, ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի վաճառքը ցրտահարությունից փուժած հողօգտագործողներին, կիրականացվի առանց առավելագույն չափաքանակի՝ փաստացի ունեցած հողատարածքի չափով:

Մեկ այլ որոշմամբ՝ փուժած մարզերի մարզպետարաններին հատկացվել է 271 մլն դրամ՝ հողի հարկի և համայնքի բյուջե վճարման ենթակա տարեկան գումարներն այդ վճարները կատարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից՝ նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարելու նպատակով: Բացի այդ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործվող ոռոգման ջրի դիմաց 2014թ. վարձավճարները փոխհատուցելու նպատակով, ՀՀ ՏԿՆ ջրտնտպետկոմին է հատկացվել 487 մլն դրամ: Ակնկալվում է, որ պետական աջակցության շնորհիվ կստեղծվեն համայնքների վնասված հողերի հետագա արդյունավետ օգտագործման, գյուղմթերքների արտադրության ծավալի և գյուղացիական տնտեսությունների եկամտի ավելացման նպաստավոր պայմաններ:

Կառավարության նիստը վարող ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանը նշել է, որ փուժած հողօգտագործողներին ցուցաբերվող աջակցությունը շարունակություն է ունենալու նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐԵԼ ԿԱՆԱՆՑ

«Ազգային ամենամեծ արժեքի» հայրենիքի բնորոշիչը մեզանում մայրն է: Մեզ համար մայր են նաև մեր հողը, մեր լեզուն, մեր օջախը: Ուստի, մեր տոնացույցի ամենակարևոր ու իմաստալից տոնն էլ Մայրության և գեղեցկության տոնն է, որի առթիվ շնորհավորում եմ մեր երկրի գյուղատնտեսությանն առնչվող մեր մայրերին, քույրերին, կանանց»: Այսպես է սկսել իր շնորհավորանքի խոսքը ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը՝ դիմելով նիստերի դահլիճում հավաքված նախարարության աշխատակցուհիներին:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի աշխատողների 60 %-ից ավելին կանայք են: Ընտանեկան հոգսերից բացի այսօր նրանք հաղթահարում են նաև սոցիալական բազմաթիվ խնդիրներ՝ շարունակելով մեր քարոտ հողից առավել հատույց ու եկամուտ ստանալու իրենց շնորհակալ ու բեղմնավոր աշխատանքը:

Ի սրտե շնորհավորելով նրանց տոնի առթիվ, Սերգո Կարապետյանը ծաղիկներ է նվիրել կանանց: Նախարարության մի շարք աշխատակցուհիներ, Մայրության և գեղեցկության տոնի առթիվ և գյուղատնտեսության ոլորտում ունեցած ներդրումների համար, պարգևատրվել են նախարարության շնորհակալագրերով:

ՈՌՈԳՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Արարատյան ջրավազանի ջրային պաշարի անարդյունավետ օգտագործման հետևանքով ստեղծվել է բնապահպանական բարդ իրավիճակ, ինչը պայմանավորված է նաև խորքային հորերի հորատումն իրականացնող սարքավորումների աշխատանքի ոչ պատշաճ հսկողությամբ:

Կառավարությունը, փոփոխելով իր նախկին որոշումներից մեկը, խստացրել է այդ հսկողությունը, ինչն էլ կնպաստի ապօրինի շահագործվող խորքային հորերի նկատմամբ հսկողական համակարգի ներդրմանը և կիրառմանը: Հաջորդ որոշմամբ հաստատվել է «Ապօրինի շահագործվող, ինչպես նաև չշահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործման թույլտվության, դրանց լուծարման և կոնսերվացման կարգը»: Փաստաթղթով արգելվել է Արարատի և Արմավիրի մարզերում ձկնաբուծության նպատակով նոր հորատանցքերի ջրօգտագործման թույլտվության տրամադրումը. նշված մարզերի համայնքների ղեկավարները չպետք է տրամադրեն նախկինից ջրօգտագործման թույլտվություն ունեցող, սակայն չհորատված հորատանցքերի շինարարական թույլտվություն: Որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ տրված են ապօրինի շահագործվող, չշահագործվող, լուծարման և կոնսերվացման ենթակա հորատանցքերի, ինչպես նաև դրանց առնչվող անձանց ու կատարվող գործողությունների սահմանումները, ինչն էլ թույլ կտա այդ գործողություններն իրականացնել առանց տարաբնույթ մեկնաբանությունների: Ժամկետանց ջրօգտագործման թույլտվության հայտերի գնահատման հիմնական պայման է հանդիսանալու ձկնաբուծական տնտեսություններում ջրօգտագործման ծավալը մինչև 1/3 չափի հասցնելը, որի համար ջրօգտագործողները պետք է ներդնեն ջրամատակարարման փակ կամ կիսափակ շրջանառու համակարգ, ինչպես նաև ջրօգտագործման ավտոմատ կառավարման արդի սարքավորումներ: Ստեղծվելու է միջգերատեսչական հանձնաժողով, որը կքննարկի և կգնահատի մինչև 2014թ. ապրիլի 1-ը ՀՀ բնապահպանության նախարարություն մուտքագրված հայտերը և կգործի մինչև 2014թ.օգոստոսի 1-ը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԻՆ

ԱՐԱԳՈՐԵՆ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՆ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԸ

Հանրապետությունում առկա է 17465 հա խաղողի այգի, որից բերքատու հասակում է 16065 հա-ն: Տեխնիկական սորտերը կազմում են ընդհանուր տարածքի շուրջ 60-65, իսկ սեղանինը՝ 20%-ը, գրեթե նույնքան էլ համապիտանի սորտերն են: ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության տվյալներով, հանրապետությունում խաղողի այգետարածքների ավելացման միտում կա, ինչը, այգեգործության զարգացման և բույսերի պաշտպանության բաժնի պետ Կարինե Եսայանի կարծիքով, պայմանավորված է գինեգործության զարգացման և խաղողի արտահանման ծավալների ավելացումով:

Սակայն խաղողագործության զարգացման վրա վերջին տարիներին բացասական ազդեցություն են ունենում բնակլիմայական անբարենպաստ պայմանները, եղանակային անակնկալները: 2011թ. ունեցանք կարկտահարությունից վնասված և հյուծված, 2013թ. դարձյալ կարկտահարությունից և գարնանային ցրտահարությունից տուժած այգիներ: Դրան ավելացան նաև ընթացիկ տարվա գարնանային տևական և ուժեղ ցրտերից վնասված այգետարածքները: Ի՞նչ միջոցառումներ ձեռնարկել խաղողի տուժած վազերի վնասի մեղմման և ցրտահարված այգիների արագ վերականգնման ուղղությամբ: «Ագրոլրատուի» հարցերին է պատասխանում Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, հանրապետության վաստակավոր գյուղատնտես, Խաղողագործության, գինեգործության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ Դերենիկ Սաֆարյանը:

- Պարոն Սաֆարյան, արդեն մի քանի օր է, ինչ մշտադիտարկումներ եք կատարում հանրապետության տարբեր գոտիների խաղողի այգիներում: Ինչպիսի՞ն է պատկերը:

- Եղանակի տեսանքները ներկայացրել էին իրենց նախնական կանխատեսումները՝ - 4 մինչև - 6°C ցրտերի վերաբերյալ: Դա, իհարկե, ճիշտ էր՝ օդի 2 մ բարձրության դիտման կետի առումով: Սակայն օդի ջերմաստիճանը հողի մակերևույթին, որտեղ հատկապես տարածված են լարային համակարգով մշակվող խաղողի վազերի բազմամյա և միամյա օրգանները, իջավ - 8 մինչև - 9°C, դա մեզ համար արդեն անսպասելի էր: Տևական ցրտերը բացասական ազդեցություն ունեցան և մեծ վնասներ պատճառեցին: Խաղողի այգիներում ձմռանը բաց վիճակում ձմեռած վազերը բավականին ուժեղ ցրտահարված են, վնասվել են ոչ միայն աչքերը, երբեմն նաև միամյա մատերը, իսկ անցյալ տարվա կարկտահարված տեղամասերում՝ նույնիսկ բազմամյա մասերի վնասվածություն կա: Պատճառն այն է, որ կարկտահարությունից առաջացած ուժեղ վերքերի հետևանքով վազերը հյուծված են եղել, վատ են հասունացել, փայտացել, նախապատրաստվել ձմռան ցրտերին: Իսկ թույլ օրգանիզմի համար միշտ էլ վտանգներն ավելի մեծ են և ծանր հետևանքներ են թողնում: Այդ պատճառով՝ այդպիսի այգիներում վնասների չափն ավելի մեծ է: Այդ տարածքներում վազերը կարող են բավականին խոր հատումների ենթարկվել՝ բազմամյա օրգանների տարբեր մասերի սահմաններում: Ինչ վերաբերում է այգեթաղի ենթարկված վազերին, ապա հողածածկից հանելուց հետո մենք ստուգել էինք դրանց վիճակը: Վերջիններս բավականին առողջ էին: Սակայն, գարնանային ցրտահարության հետևանքով, անկախ հասունացման ժամկետից, ավելի շատ վնասվել են սեղանի սորտերը: Վնասվածության են ենթարկվել նաև

բերքատու շվերը, իսկ թույլ աճողները և ձևավորման համար ոչ պիտանիները՝ հեռացնել: Պատկերացում կազմելով վազի բեռնվածության վերաբերյալ, պետք է նպաստել նոր, համեմատաբար ուժեղ աճին՝ այդպիսով վազը նախապատրաստելով գալիք տարվա ուշահաս իծապտուկների խումբը՝ Շահումյանի, ինչպես նաև Կախեթ, Մսխալի, քիշմիշային և այլ սորտերը: Առավել տուժել են այն այգետարածքները, որոնցում վատ են կազմակերպվել հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:

- Այդ դեպքում առաջնահերթ ի՞նչ միջոցառումներ պետք է կատարել:

- Մենք խաղողագործներին ցուցում տվեցինք սպասել մինչև բողբոջների ուռչելն ու բացվելը, վազերի վրա ընտրել բարձր բերքատվությանը: Եթե վազի բեռնվածության համար շվերը պակաս լինեն, փորձառու այգետերն, իհարկե, դա նկատում է, ապա վազի վրայի բազմամյա մասերից գերաճող, ձևավորման համար հարմար դիրք ունեցող 2 - 4 շիվ (վաղ ժամկետում, երբ կունենան 6 - 7 տերև) ծերատել՝ 4 - 5 հանգույցից հետո: Այդ դեպքում դրանց վրա կողքից աճող շվերը կտան բճաշվային բերք: Այսպես, ընտրությամբ և լրացուցիչ աճերի միջոցով, կարելի է վերականգնել և անցյալ տարվա կարկտահարության հետևանքով վնասված և, իհարկե, գարնանային ցրտահարություններից տուժած վազերը:

- Իսկ ի՞նչ լրացուցիչ միջոցառումներ պետք է ձեռնարկել, որպեսզի հնարավորինս արագ վերականգնվեն վնասված այգիները:

- Մենք խորհուրդ ենք տալիս գարնանը լիարժեք պարարտացնել այգիներն ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով: Մինչև այս տարի այգիները սովորաբար պարարտացվել են միակողմանի՝ ազոտական պարարտանյութով: Դա մասամբ նպաստել է բույսի աճին, բայց բացասական ազդեցություն է թողել վազերի դիմացկունության և բերքի որակի վրա: Մինչդեռ վիրավորված, հյուծված, վնասներ կրած վազերին անհրաժեշտ է սննդանյութեր մատակարարել: Իհարկե, կարևոր է նաև վաղ գարնանից, ճիշտ ժամկետում, սնկային հիվանդությունների և վնասատուների դեմ կանխարգելիչ միջոցառումների կատարումը՝ առանձնապես չսպասելով նշանների: Նախնական կանխատեսումների համաձայն, ապրիլ - մայիս ամիսներին նույնպես անձրևային առատ տեղումներ են սպասվում, որոնք կարող են նպաստել սնկային հիվանդությունների զարգացմանը: Ապահովելով վազերի առողջ աճը՝ կնպաստենք ծաղկման շրջանում ծաղկաբույլերի վրա պտուղների լավ կազմակերպմանը: Այդ աշխատանքները ճիշտ ժամկետներում կազմակերպելու դեպքում՝ գալիք տարի մենք կունենանք սովորական, երբեմն նաև բարձր բերք: Ձեռնարկվող միջոցառումների շնորհիվ հնարավոր է դիմակայել, հաղթահարել և իհարկե, արագորեն վերականգնել խաղողի այգիները: Չպե՞տք է հուսալքվել:

- Որպես մասնագետ, ի՞նչ կհղեիք խաղողագործին:

- Գլոբալ տաքացումը մեզ հաճախ անակնկալներ է մատուցում: Մեծացել է եղանակային պատահարների հաճախականությունը: Այդպիսով, տարեցտարի մեծանում է գյուղատնտեսության վարման ռիսկայնությունը:

Խաղողագործին մենք կոչ ենք անում օգտագործել բազմամյա փորձը և կիրառել մեր խորհուրդները: Պետք է ճիշտ և լիարժեք կազմակերպել այգիների խնամքի, սնուցման, պաշտպանության և դիմացկունության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Այդ դեպքում, մենք ոչ թե 3 - 4 տարի հետո, այլ ընդամենը 1 - 2 տարվա ընթացքում կունենանք վերականգնված այգիներ:

Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան կազմակերպում է ավանդական դարձած ցուցահանդես-վաճառք, որոնց հասույթն օգտագործվում է բարեգործական նպատակով: Օրերս ցուցահանդես-վաճառք իրականացվեց նաև Կարապի լճի փարածքում: Իսկ թե ո՞րն է ցուցահադեսների կազմակերպման հիմնական նպատակը, ՀԵԿԱ-ի փնտրողն Լ. Ասատրյանը նշեց, որ կին արտադրողներին հերթական անգամ հնարավորություն է տրվում ներկայացնել իրենց ձեռագործ և այլ աշխատանքներն ու ավելի հասանելի լինել գնորդին: Նաև որոշակի ֆոնդ է ապահովվում, որով իրականացվում են այլ բարեգործական ծրագրեր: «Յուցահանդես-վաճառքի գումարներն ուղղելու ենք մարզերում՝ մասնավորապես Լոռու մարզում, կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը, գիտելիքների տրամադրմանը, ինչպես նաև ֆինանսական աջակցությանը՝ հստակ որոշակի գործառնություն, բիզնես իրականացնելու համար»,- նշել է Լ. Ասատրյանը:

Բարեգործական ցուցահանդես-վաճառքի աջակիցն է Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպությունը: Միջոցառմանն իրենց արտադրանքով (արվեստի գործեր, արդուզարդ, հուշանվերներ, անուշեղեն, համեմունքներ, ձեռքի աշխատանքներ և այլն) ներկայացել էին անհատներ ու կազմակերպություններ Երևանից և ՀՀ մարզերից, ինչպես նաև ՀԵԿԱ-ի կողմից հիմնված և համակարգվող ՀՀ Կին ձեռներեցների ցանցի անդամներ, սիրիահայեր:

Նշենք, որ ՀԵԿԱ-ն բարեգործական բնույթի ցուցահանդես վաճառքներ կազմակերպում է 2010թ.-ից ի վեր, տարբեր առիթներով՝ նվիրված Ամանորին, Սուրբ Ծննդին, Կանանց տոներին, ՀՀ Անկախության օրվան: 2013թ.-ից սկսած՝ ՀԵԿԱ-ն բարեգործական ցուցահանդես վաճառքներ կազմակերպելու քաղաքականությունը տարածում է նաև ՀՀ մարզերում՝ կանանց խրախուսելու միջոցով նպաստելով համայնքների տնտեսական զարգացմանը:

Լիանա Շախնազարյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՆՈՐ ՋԵՐՄՈՑՆԵՐ

Ջերմոցային տնտեսությունների անհրաժեշտություն է նկատվում հանրապետության գրեթե բոլոր մարզերում:

«ONEArmenia» կազմակերպության ծրագրի ղեկավար Նորա Կայսերյանի հավաստմամբ, Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի բնակիչների համար հավաքվել էր ավելի քան 13 հազար դոլար: Նրա խոսքով՝ հավաքված գումարը նախատեսված էր «Սահման» կազմակերպության կողմից՝ ջերմոցների կառուցման համար: Կառուցվել են 4 նոր ջերմոցներ: Վերջերս «Սահման» կազմակերպության ներկայացուցիչներն այցելել են Բերքաբեր և այցի ընթացքում բնակիչներին վարունգի և լոլիկի սածիլներ են բաժանել: Այս տարի հունիս-հուլիսին ջերմոցները լիարժեքորեն կգործեն:

Հիշեցնենք, որ «ONEArmenia» կազմակերպությունը նախորդ տարի սկսել էր իր չորրորդ նախաձեռնությունը սահմանամերձ Բերքաբեր գյուղի մոտ 500 բնակիչների համար ջերմոցների կառուցման ուղղությամբ:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի է ունեցել ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի հանդիսավոր նիստը, որտեղ ամփոփվել են «Լավագույն համայնք՝ կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխության, ինչպես նաև «Լավագույն լրագրող՝ կանանց հիմնախնդիրների լուսաբանման գործում» ՀՀ վարչապետի 2014 թ. մրցանակաբաշխության արդյունքները:

Մինչ պարգևատրման պաշտոնական արարողության մեկնարկը ցուցադրվել են կարճամետրաժ ֆիլմեր մրցանակաբաշխություններում հաղթող ճանաչված կանանց մասին: Այնուհետև ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը շնորհավորել է մի շարք անվանակարգերում հաղթողներին և նրանց հանձնել պատվոգրերը: Մասնավորապես, «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխության շրջանակում «Լավագույն կին գործատու» անվանակարգում հաղթող են ճանաչվել «Իզոտեխ» ընկերության հիմնադիր Գոհար Հարությունյանը՝ Երևանից և «Գորիսի միկրոշարժիչ» ընկերության հիմնադիր Սոնա Բալասանյանը՝ ՀՀ Սյունիքի մարզից, «Լավագույն կին նորարար» անվանակարգում՝ «Արթ սուիթ» ընկերության հիմնադիր-տնօրեն Նաիրա Բալասանյանը՝ Երևանից և «Բոնուս» առևտրի կենտրոնի տնօրեն Լիանա Գրիգորյանը՝ ՀՀ Վայոց ձորի մարզից, «Լավագույն կին բարեգործ» անվանակարգում՝ «Արտ Բրիջ» ընկերության հիմնադիր-տնօրեն Շաքեի Հավան Կարապետյանը՝ Երևանից և անհատ ձեռներեց Այծեմնիկ Օհանյանը՝ ՀՀ Լոռու մարզից, «Լավագույն ապրանքանիշ» անվանակարգում՝ «Կառա ընդ կո» ընկերության հիմնադիր Կարինե Ավետիսյանը՝ Երևանից և «Գոլդն Գրեյպ ԱրմԱս» ընկերության տնօրեն Վիկտորիա Ասլանյանը՝ ՀՀ Արագածոտնի մարզից, «Լավագույն երիտասարդ կին գործարար» անվանակարգում՝ «Գանգես» ընկերության հիմնադիր-տնօրեն Մարինե Ներսիսյանը՝ Երևանից և անհատ ձեռներեց Էմմա Մարգարյանը՝ ՀՀ Արմավիրի մարզից, «Լավագույն սկսնակ կին գործարար» անվանակարգում՝ «ԵՎԱՍ»ընկերության հիմնադիր-տնօրեն Արմինե Մուրադյանը՝ Երևանից և անհատ ձեռներեց Նուբար Սահակյանը՝ ՀՀ Տավուշի մարզից:

ՀՀ վարչապետի պատվոգրերին են արժանացել նաև «Լավագույն համայնք՝ կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության «Լավագույն գյուղական համայնք՝ կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն քաղաքային համայնք՝ կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգերում համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցություն ցուցանիշով հաղթող ճանաչված քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարները: Մասնավորապես, «Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքը, 2-րդ և 3-րդ տեղերում՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան և ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքները, իսկ «Լավագույն գյուղական համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Գոմք գյուղական համայնքը, 2-րդ և 3-րդ տեղերում՝ ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ և ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղական համայնքները: Ոլորտում ակտիվ գործունեություն ծավալելու համար խրախուսական մրցանակների են արժանացել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղաքար համայնքի ղեկավար Կարինե Մարտիրոսյանը, ՀՀ Լոռու մարզի Մեղվահովիտ համայնքի ղեկավար Համեստ Շահբազյանը և ՀՀ Սյունիքի մարզի Լիճք համայնքի ավագանու անդամ Թագուհի Մարգարյանը:

Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեությունը և նախաձեռնողությունը խրախուսելու, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանվույն գնահատելու նպատակով խրախուսական պատվոգրեր, հատուկ նվերներ և մրցանակներ են հանձնել նաև միջազգային մի շարք կազմակերպություններ՝ ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների զարգացման» ծրագիրը (USAID/PRP), ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP), ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակը (UNHCR), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման ծրագիրը (UNIDO), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), Ասիական զարգացման բանկը (ADB), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակը (EBRD/BSO), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման ծրագրի «Հայաստանի երիտասարդության ձեռնարկատիրական գործունեության օժանդակություն» ծրագիրը, ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագիրը (USAID/EDMC):

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պարարտանյութերի (հանքային, օրգանական, բակտերիալ) կիրառումը հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում կարևոր դեր ունի: Ահա թե ինչու, զարգացած երկրներում, հանքայինից բացի, արտադրում են մեծ քանակությամբ օրգանական պարարտանյութեր: Դրանք կիրառվում են ոչ միայն հողն այս կամ այն սննդատարրերով հարստացնելու, այլև հողային պայմանները բարելավելու համար:

ՀՀ հողային պայմաններում պարարտանյութերի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորվում է այն փաստով, որ հողերի մեծ մասն օժտված է ցածր բնական բերրիությամբ, ուստի, առանց պարարտանյութերի կիրառման, մշակաբույսերից բարձր բերքի ստացումը հնարավոր չէ:

Ազոտի դերը

Մշակաբույսերի աճի ու բերքատվության առավել կարևոր տարրն է: Ազոտով, ինչպես նաև ջրով և մյուս անհրաժեշտ սննդատարրերով ապահովված բույսերն առաջացնում են խոշոր, մուգ կանաչ գույնի տերևներ, որոնք կատարում են ակտիվ ֆոտոսինթեզ, առաջացնում լավ աճ և բարձր բերք: Սակայն բույսերի համար մնասակար են ինչպես ազոտի պակասը, այնպես էլ՝ ավելցուկը: Ազոտի ավելցուկի դեպքում բույսերն առաջացնում են բուռն վերգետնյա աճ, սակայն գեներատիվ օրգաններ քիչ են գոյանում, ձգձգվում է բերքի հասունացումը, ընկնում որակը, հատկապես ավելանում է նիտրատների պարունակությունը տերևաբանջարների մոտ:

Մշակաբույսերի ազոտով պարարտացման պահանջը ճիշտ որոշելու համար՝ գոյություն ունեն տարբեր մեթոդներ: Դրանցից առավել ճշգրիտը՝ դաշտային պարարտացման փորձն է, որը պահանջում է տևական ժամանակ (2-3 վեգետացիա): Այն ֆերմերների համար ընդունելի մեթոդ չէ: Մյուսը՝ հողի անալիզի մեթոդն է, երբ հողում որոշվում է մատչելի ազոտի պարունակությունը: Ըստ այդմ, 100 գ հողում, մինչև 8 մգ ազոտի պարունակության դեպքում, հողը համարվում է ազոտով թույլ ապահովված և ազոտով պարարտացման մեծ կարիք ունի, 8-12 մգ-ի դեպքում՝ միջակ ապահովված, և ունի պարարտացման միջակ պահանջ, 12 մգ-ից բարձրի դեպքում՝ հողը համարվում է ազոտով լավ ապահովված և ազոտով կարելի է չպարարտացնել կամ պարարտացնել ցածր չափաքանակներով: Կարևոր մեթոդ է հանդիսանում նաև բույսի հյուսվածքներում սննդատարրերի հանքային ձևերի որոշման մեթոդը, որը հեշտ կիրառելի է, կատարման համար հմտություն չի պահանջվում:

Ֆոսֆորի դերը

Առանց ֆոսֆորի որևէ բուսական կամ կենդանական օրգանիզմ գոյություն ունենալ չի կարող: Այն մտնում է բույսի կյանքի համար անփոխարինելի այնպիսի նյութերի բաղադրության մեջ, որոնք մասնակցում են սպիտակուցների սինթեզին, բույսերի աճին, էներգափոխանակմանը, բազմացմանը, ժառանգական հատկությունների փոխանցմանը, մարդկանց և կենդանիների նյարդային համակարգի բնականոն գործունեությանը:

Ֆոսֆորով ապահովված բույսերը լավ են աճում, ավելանում է արմատների կլանող հատկությունը, շուրջ 30%-ով նվազում է միավոր բերքի ստացման համար ծախսված ջրի քանակը, որը կարևոր է հանրապետության անջրդի (չորային) երկրագործության համար: Այս առումով, ֆոսֆորի պահանջը մեծ է այն մշակաբույսերի մոտ, որոնց բերքում կուտակված են շաքարներ (խաղողի վազ, պտղատու ծառեր, բանջարային մշակաբույսեր, ծխախոտ, հացահատիկ):

Ֆոսֆորը նպաստում է վաղ բերքի ստացմանը, որի իրացումից ավելանում է ֆերմերի շահույթը: Այն կարևոր է նաև ուշահաս սորտերի և կարճ վեգետացիայով գոտիների համար:

Ֆոսֆորով բավարար սնման դեպքում մշակաբույսերը սնկային հիվանդություններից թույլ են մնասվում, նվազում է հացահատիկային մշակաբույսերի արմատային փտումը:

Ֆոսֆորի պահանջը որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի քիմիական անալիզի, բույսի հյուսվածքներում հանքային ֆոսֆորի պարունակությունը գնահատելու միջոցով:

Բանջարային, պտղատու մշակաբույսերն ու խաղողի վազը, ի տարբերություն հացահատիկային մշակաբույսերի, վեգետացիայի ամբողջ ընթացքում զգում են ֆոսֆորի պահանջ, ուստի, այդ մշակաբույսերի ֆոսֆորով պարարտացումը պետք է կատարել՝ հաշվի առնելով նշված հանգամանքը: Այդ նպատակով՝ բանջարային մշակաբույսերի համար պահանջվող ֆոսֆորական պարարտանյութերի (նաև՝ օրգանական) ամբողջ քանակը հարկ է կիրառել սածիլումից առաջ, հողը նախապատրաստելիս, իսկ պտղատու և խաղողի այգիներում ամբողջությամբ գարնանը՝ միջշարային տարածությունները մշակելու ժամանակ՝ ակոսային կամ բնային եղանակով, կամ մի մասը տրվում է սնուցման ձևով՝ պտուղների

6

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ...

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախորդ դարի 60-ականներից՝ սկզբում Կլիվ Բաքստերը, իսկ ապա Պիտեր Թոմպկինսն ու Քրիստոֆեր Բեռդը 1979թ.-ին լույս տեսած «Բույսերի գաղտնի կյանքը» հանրահայտ գրքում գաղափար տվեցին, որ բույսերն օժտված են էմոցիաներով, որոնք արտահայտվում են ոչ միայն այն ժամանակ, երբ նրանց որևէ մնաս է հասցվում, այլև՝ երբ այդ մնասը մտադրության ձևով է արտահայտվում: Դրանց սկզբում վերաբերվեցին թերահավատությամբ, բայց վերջերս, գնալով ավելի ու ավելի շատ փաստեր են գալիս դրանք հաստատելու:

2010-ին "Наука" ամսագրում ապացույցներ բերվեցին, որ մնասատու միջատների հարձակումից հետո փորձարկվող բույսերն արտանետել են ցնդող նյութեր, որոնք գրավել են այդ միջատներին ոչնչացնող գիշատիչ բզեզներին: Իսրաելի Բեն-Գուրիոնի համալսարանի գիտնականները նկատել են, որ սովորական ոլոռն իր արմատային համակարգի միջոցով կարողանում է այլ բույսերի տեղեկություն հաղորդել գալիք երաշտի վերաբերյալ, որն ընդունելով՝ դրանք վաղորոք սկսում են իրենց այնպես պահել, որ մինչև իրական երաշտն արդեն լրիվ ադապտացված են լինում:

Գերզգայուն միկրոֆոններ օգտագործելով՝ Բոննի համալսարանի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի գիտնականները՝ Ֆրանկ Կյունեմանի գլխավորությամբ, նկատել են, որ վտանգի ենթարկված բույսն իր ողջ տերևային մակերեսով էթիլեն է արտադրում, որի ձայնային հաճախականությամբ առաջացրած տատանումների ինտենսիվությունն ուղիղ համեմատական է վտանգի մեծությանը:

Նման նուրբ փոխազդեցություններ կարելի է գրանցել և ավելի պարզ միջոցներով: Նույն էթիլենը սկսում է արտադրել ծառից պոկած խնձորը: Երբ այն տեղադրում եք բրոմելիա տարածված սենյակային ծաղկաբույսի հետ, պոլիէթիլենային փաթեթում, բրոմելիան, էթիլենի ազդանշանը որպես տագնապ ընդունելով՝ մեկ շաբաթում սկսում է ծաղկել, որպեսզի ապահովի իր կյանքի շարունակականությունը:

Եվ իրավացի է Բասկյան համալսարանի պրոֆեսոր Միքաել Մարդերը, որ բոլորիս ուշադրությունն է հրավիրում բույսերի խոցելիության վրա՝ նշելով, որ այսօր ամեն մի հինգերորդ բուսատեսակ անհետանալու եզրին է կանգնած: Եվ այդ ուշադրությունն է, որ կարող է փրկել այժմ արդեն խիստ վտանգված կենսաբազմազանությունը:

Այս պարագայում՝ հատկապես հետաքրքիր է թվում այն փաստը, որ եռանդուն կերպով շարունակում ենք պարզել, թե արդյոք կա կյանք Մարսի վրա, թե ոչ. կարծես երկրագնդի վրա գտնվող կյանքի հետ արդեն խնդիրներ չունենք:

Վ.Հ

ԾԱՌԱՏՈՒՆԿ

ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Գարնան գալուն պես Սիսիանում սկսվել են մասսայական ծառատունկի աշխատանքները: Տարվա առաջին ծառերը տնկվել են քաղաքում կառուցվող նոր մարզահամալիրի հարևանությամբ, որտեղ հիմնվել է Երիտասարդական այգին՝ Սիսիանը երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու կապակցությամբ:

Ծառատունկն իրականացվել է քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի գլխավորությամբ, աշխատանքներին մասնակցել են քաղաքապետարանի ենթակա կազմակերպությունների աշխատակիցներն ու «Սիսական» գնդի զինվորները:

Այս գարնանը ծառատունկ է կատարվել նաև Սիսիանի Սուրբ Հովհաննես եկեղեցու հարևանությամբ կառուցված քաղաքային պանթեոնում, որի բարեկարգման աշխատանքները սկսվել են դեռ անցած տարվանից, և նախատեսված է դրանք ավարտին հասցնել 2015 թվականին: Նախապես հատվել են տարածքի ծեր ու անկանոն աճած ծառերը: Այժմ դրանք փոխարինվում են նորերով: Այստեղ ծառատունկի համար անհրաժեշտ 200 եղևնի տրամադրել է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը: 15-ական եղևնիներ տնկվել են նաև տարածաշրջանի Անգեղակոթ և Շաղատ գյուղերի պանթեոններում: Ծառատունկն իրականացնում են Ույծ, Նորավան, Շամբ համայնքների ազատամարտիկները, որոնց օգնում են տարածաշրջանի պատանի երկրապահները:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

5գ

կազմակերպման ու բուռն աճի ընթացքում: Ֆոսֆորական պարարտանյութերի կիրառման ժամկետները որոշելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք հողում չեն տեղաշարժվում:

Կալիումի դերը

Այն նպաստում է ֆոտոսինթեզի արդյունավետության բարձրացման, ածխաջրերի սինթեզին, փոխակերպմանն ու տեղաշարժմանը տերևներից բերքի մեջ կամ պահեստային օրգաններ: Կալիումը նպաստում է սպիտակուցների սինթեզին, խթանում մերիստեմային բջիջների աճին, կարգավորում ջրային ռեժիմը, բույսերը դիմանում են ժամանակավոր չորությանը: Կալիումի դերը հատկապես մեծ է աշնանացան հացաբույսերի ձմեռադիմացկունության բարձրացման գործում, խիստ կարևոր է խաղողի վազի և բազմամյա տնկարկների միամյա շվերի փայտացման համար:

Կալիումի պակասից տերևները կնճռոտվում են, նվազում է դիմացկունությունը սնկային հիվանդությունների և ցրտերի նկատմամբ:

Ինչպես այլ սննդատարրերի դեպքում, մշակաբույսերում կալիումի պահանջը որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի կամ բույսի քիմիական անալիզի միջոցով:

Երկաթի դերը

Երկաթը բույսերի սննդառության համար անփոխարինելի տարր է: Բավական է միայն նշել, որ բույսի տերևներում քլորոֆիլի սինթեզն ու կենսական շատ գործընթացներ կատարվում են երկաթ պարունակող ֆերմենտների մասնակցությամբ: Երբ բույսերը երկաթի բավարար քանակով են սնվել, տերևները լինում են խոշոր և մուգ կանաչ գույնի, բույսը լավ է աճում և տալիս է բարձր բերք: Երկաթը նպաստում է նաև արմատային համակարգի լավ աճին և կլանման ունակության ավելացմանը: Մեզանում մշակաբույսերի երկաթով սննդառությունը հաճախ է խախտվում: Քանի որ հանրապետության հողերը հիմնային են, այդ պայմաններում առաջանում են բույսերի համար դժվար մատչելի երկաթի միացություններ:

Այդ երևույթը մշակաբույսերի վրա նկատվում է տերևների դեղնությամբ (քլորոզով), որը առավել արտահայտված է լինում երկրորդ տերևի վրա: Ընդ որում, որքան երկաթի պակասը մեծանում է, այնքան ուժեղանում է բույսի սաղարթի դեղնությունը: ՀՀ հողատարածքներում երկաթի պակասից առաջացող քլորոզը հատկապես նկատվում է պտղատու և խաղողի այգիներում՝ պտղաբուծական և խաղողագործական շրջաններում: Նշենք, որ բազմամյա տնկարկներում, քլորոզի պարբերաբար կրկնման դեպքում, բույսի աճն ու բերքատվությունն էապես նվազում են, սաղարթը կարող է հետագայում չորանալ, իսկ այգու մշակությունը դառնալ ոչ արդյունավետ:

Մշակաբույսերի քլորոզի դեմ պայքարելու համար գիտնականներն առաջարկել են երկաթի համալիր միացություններ, այդ թվում՝ դիէթիլեն եռամին հինգքացախաթթվի երկաթի համալիրը, կոմպլեքսոնը և այլ: Նշված միացությունները կիրառվում են. հող մտցնելով և արտաարմատային սնուցումով՝ 0.2-0.3% ջրային լուծույթով: Պարարտանյութերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ցանկալի է դրանք կիրառել, քանի դեռ դեղնության նշաններ չեն երևացել կամ՝ նոր են սկսում երևալ: Մյուս կարևոր պայմանն այն է, որ արտարմատային սնուցումը պետք է կատարել օրվա զով ժամերին՝ առանձին կամ համատեղելով բուժանյութերի կամ հերբիցիդների կիրառման հետ: Կոմպլեքսոնը բարձր արդյունք է ապահովում նաև հացահատիկային մշակաբույսերի սերմերը ցանքից առաջ ջրային լուծույթով թրջելու դեպքում՝ 1 հեկտարի համար ծախսելով 1-1.5կգ պարարտանյութ:

Օրգանական պարարտանյութերի դերը

Օրգանական պարարտանյութերի (գոմաղբ, թռչնաղբ, կենսահումուս, տորֆ, կոմպոստ) դերը մշակաբույսերի պարարտացման և հողի հատկությունների բարելավման համար շատ կարևոր է: Օրգանական պարարտանյութերը պարունակում են բույսերին անհրաժեշտ բազմաթիվ սննդատարրեր: Դրանց կենսաբանական քայքայումից անջատվում է ածխաթթու գազ, որն անհրաժեշտ է ֆոտոսինթեզի համար: Գոյանում են հումուսային նյութեր, և հողում հումուսի քանակն ավելանում է, որն, ինչպես հայտնի է, խիստ անհրաժեշտ երևույթ է՝ դրանով բարելավվում են հողի խոնավունակությունը, ծակոտկենությունը, օգտակար միկրոօրգանիզմների գործունեությունը: Անհրաժեշտ է կիրառել միայն հասունացած գոմաղբ, որում արդեն ոչնչացել են մոլախոտերի սերմերի մեծ մասը, իսկ սննդատարրերը վերածվել են բույսերին մատչելի ձևերի: Ակնհայտ է, որ այդ պարարտանյութերի դերը մեծ է հատկապես օրգանական գյուղատնտեսություն իրականացնելիս: Գոմաղբի կիրառման չափաքանակները, կախված հողի հատկությունից և մշակաբույսից, կարող են տատանվել 20-60 տ/հա սահմաններում: Հացահատիկային մշակաբույսերի համար նպատակահարմար է կիրառել 20-30 տ/հա, բանջարային մշակաբույսերի համար՝ 30-40 տ/հա, պտղատու և խաղողի այգիների համար՝ 40-60 տ/հա: Խիստ ծանր կամ նկատելի թեթև մեխանիկական կազմով և նոր մելիորացված հողերում կարելի է կիրառել գոմաղբի ավելի բարձր չափաքանակներ՝ 60-80 տ/հա:

Գոմաղբի կիրառման լավագույն ժամկետը համընկնում է հողի հիմնական մշակությանը՝ աշնանը կամ վաղ գարնանը:

Կենսահումուսը և թռչնաղբը սննդատարրերով ավելի հարուստ են և կիրառվում են առավել պակաս չափաքանակներով՝ 1-10 տ/հա: Կենսահումուսը կիրառելի է ցանքից (տնկումից) առաջ և ցանքից հետո, նաև սնուցման ձևով, իսկ թռչնաղբը՝ ցանքից առաջ և սնուցման ձևով:

Տորֆը, կենսահումուսն ու հասուն գոմաղբը մեծ կիրառություն ունեն նաև ջերմոցներում և ջերմատներում՝ հողախառնուրդ պատրաստելու համար:

Բակտերիական պարարտանյութերի դերը

Սրանց կիրառման նպատակն է՝ հողը հարստացնել այնպիսի բակտերիաներով, որոնք նպաստավոր պայմաններում, մշակաբույսերի արմատային համակարգի շրջակայքում բազմանում են և իրենց գործունեությամբ օդի մոլեկուլային ազոտի հաշվին հողը հարստացնում կենսաբանական ազոտով, նաև քայքայում են բուսական մնացորդները՝ վերածելով դրանք սննդատարրերի, ինչը հատկապես կարևորվում է օրգանական գյուղատնտեսության ժամանակ: Դրանք կիրառվում են սերմերը պարարտանյութի լուծույթով թրջելով ջրման հետ կամ արտաարմատային սնուցմամբ: Ներկայումս վաճառքում են՝ Ազոտովիտ, Բայկալ ԷՄ-1, «ՄՄ» և այլ բակտերիալ պարարտանյութեր, որոնց պիտակների վրա նշված են նաև օգտագործման եղանակները: Կարևոր է իմանալ, որ բակտերիական պարարտանյութերը վեգետացիայի ընթացքում 25-30 օրը մեկ կիրառելու դեպքում, հնարավոր է կանխել սնկային հիվանդությունների զարգացումը:

Ս. Երիցյան
Հայաստանի ազգային
ագրարային համալսարան

Իրազեկման միջոցառում

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

«Հեյֆեր Հայաստանը», Եվրոպական Միության աջակցությամբ, կազմակերպել էր հանրության իրազեկման միջոցառում, որը նվիրված էր «Երիտասարդները՝ հանուն տարածաշրջանում փոխադարձ կապի պահպանման և համագործակցության» ծրագրի ձեռքբերումներին:

Ծրագրի շրջանակներում ստեղծված Տարածաշրջանային երիտասարդական ցանցի (ՏԵՑ)-ի անդամները ներկայացրեցին իրենց ձեռքբերումները և հետագա պլանները: Տեղի ունեցավ նաև ծրագրի վեբկայքի պաշտոնական ներկայացումը՝ հյուրերի և Հայաստանի գյուղաբնակ համայնքներից ծրագրում ընդգրկված երիտասարդների համար:

Տարածաշրջանային երիտասարդական ցանցի համակարգող խորհրդի անդամ Հողեր Հարությունյանը նշեց, որ խորհուրդը հիմնադրվել է մեկ ամիս առաջ՝ Թբիլիսիում, Տարածաշրջանային երիտասարդական համաժողովի ընթացքում: «Մենք հոդակագիրը ստորագրել ենք անցյալ ամսին և, այդ ժամանակից ի վեր, ակտիվորեն ներգրավված ենք համակարգող խորհրդի աշխատանքներում»,- նշել է նա:

Տարածաշրջանային երիտասարդական ցանցի համակարգող խորհուրդն այժմ մշակում է սևծովյան ավազանի երիտասարդական ցանցի ռազմավարությունն ու համակարգման գործողությունների պլանը: «Խորհրդի անդամներից յուրաքանչյուրը պատասխանատու է լինելու որոշակի առաջադրանքի համար»,- նշել է նա: «Համակարգող խորհրդի անդամները կառավարելու են ծրագրի վեբկայքը և առցանց ֆորումը, որտեղ ցորս գործընկեր երկրների երիտասարդները կկազմակերպեն առցանց բանավեճեր և քննարկումներ, կնախաձեռնեն միասնական մշակութային միջոցառումներ և միմյանց կներգրավեն սևծովյան ավազանի տարածաշրջանի մանկապատանեկան ակումբների և կենտրոնների աշխատանքներում»,- կարևորել է Հողեր Հարությունյանը:

«Ծրագիրը մեզ ոչ միայն բազմաթիվ գիտելիքներ և հմտություններ է տվել, այլ նաև հնարավորություն է ընձեռել՝ հաղորդակցվելու և համագործակցելու ծրագրում ընդգրկված երիտասարդների հետ: Երիտասարդների համագործակցությունը շատ կարևոր է, քանի որ այսօրվա երիտասարդությունը երկրի ապագան է»,- ասել է ՏԵՑ-ի անդամ Շուշան Գրիգորյանը:

Կայացավ համակարգող խորհրդի հերթական նիստը

Երևանում կայացավ ԱՊՀ անդամ պետությունների բույսերի կարանտինի համակարգող խորհրդի հերթական նիստը, որը կազմակերպել էին համակարգող խորհուրդը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

Աշխարհանքային հանդիպման նպատակը՝ բույսերի կարանտինի ոլորտում ԱՊՀ անդամ երկրների համագործակցության մասին 1992 թ. նոյեմբերի 13-ի Համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրության նախագծի և բուսասանիտարական փոխգործակցությանն առնչվող հարցերի քննարկումն էր: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Աբրամ Բախչագուլյանը, բուսասանիտարիայի տեսչության պետ, ԱՊՀ անդամ երկրների բույսերի կարանտինի համակարգող խորհրդի անդամ Արթուր Նիկոյանը և ԱՊՀ համակարգող խորհրդի տնտեսական համագործակցության դեպարտամենտի աշխատակից Բորիս Սիդորովը:

Հանդիպման մասնակիցները ներկայացրեցին իրենց երկրներում տիրող բուսասանիտարական վիճակը: Խորհրդի քարտուղարության աշխատանքային ուղղությունների մասին զեկույցով հանդես եկավ քարտուղարության ղեկավար, ՖՊԸՀ «ԲԿՀԿ»-ի տնօրեն Ուլլուբի Մագոմեդովը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության բուսասանիտարական ռիսկերի կառավարման բաժնի պետ Մերուժան Թարզյանն անդրադարձավ ԱՊՀ անդամ պետությունների միջև բուսասանիտարայի ոլորտում համագործակցության ամրապնդման և հատուկ մոտեցում պահանջող դեպքերում՝ փոխադարձ աջակցություն ցուցաբերելու հարցերին: Նա առաջարկեց մշակել նոր մոդելներ՝ այդ երկրների միջև բուսասանիտարիայի ոլորտում ծագած խնդիրների արագ կարգավորման նպատակով համագործակցությունն ավելի սերտացնելու ուղղությամբ:

ԱՊՀ անդամ երկրների բույսերի կարանտինի համակարգող խորհրդի նոր նախագահ ընտրվեց Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության տեսչության պետ Լեոնիդ Պլեշկոն:

Համակարգող խորհրդի հերթական նիստը կկայանա 2015 թ. երկրորդ եռամսյակում՝ Ղազախստանի Հանրապետությունում:

Նյութերը՝ Նելլի Սահակյանի

Շաբաթօրյակ

ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՔԱՂԱՔԸ

Երևանի քաղաքապետարանը մայրաքաղաքի փողոցներում, բակային տարածքներում, այգիներում և պուրակներում, ընդհանուր օգտագործման այլ տարածքներում հայտարարել էր համաքաղաքային ծառատունկի և բարի ավանդույթ դարձած շաբաթօրյակի օր: Մաքուր, բարեկարգ ու կանաչ քաղաք ունենալը բոլորիս ցանկությունն է և, միաժամանակ, բոլորիս պարտականությունը:

Այս գիտակցությամբ համակված էին համաքաղաքային շաբաթօրյակի օրը գործի անցել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակիցները՝ նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանի գլխավորությամբ: Նրանք վաղ առավոտից արդեն գյուղատնտեսության նախարարության Արաբկիրի վարչական տարածքում գտնվող մասնաշենքի բակում էին:

Ջանասիրաբար կատարված աշխատանքներից հետո մասնաշենքն ու բակը հաճելի տեսք ունեին:

Լ. Շախնազարյան

Ազգային տոներ

ՁԱՏԻԿ՝ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Այս տարի Հայ առաքելական եկեղեցին Զատիկը նշում է ապրիլի 19-ին:

Ավագ շաբաթը սկսում է Զատիկին նախորդող կիրակիից՝ Ծաղկազարդի տոնից: Այն օրն է, երբ Քրիստոսին ընդունում են Երուսաղեմում, այնուհետև այդ նույն մարդիկ նրան խաչն են բարձրացնում: Երրորդ օրը Քրիստոս հարություն է առնում, որի հաղթական օրն էլ ամեն տարի նշում են աշխարհի բոլոր քրիստոնյաները: Տոնը հայտնի է նաև Ծառզարդար, Ծառկոտրունք անուններով: Սա շարժական տոն է և նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ: Համաձայն քրիստոնեական եկեղեցու՝ տոնը խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Երբ Հիսուսը մտնում է Երուսաղեմ, համաձայն Աստվածաշնչի, դիմավորողները նրա առջև փռում են իրենց զգեստներն ու ձիթենու, արմավենու ճյուղեր: Հագուստներ փռելը հին աշխարհում խորհրդանշել է մեղքերից քավություն ստանալը, իսկ ծառի ճյուղերը՝ փառքը, հաղթանակը (հիշենք դափնեպսակը հին Հունաստանում: Ծաղկազարդի նախօրեին բացվում են եկեղեցիների խորանի վարագույրները, իսկ բուն տոնին կատարվում է պատարագ՝ բաց վարագույրներով: Ծաղկազարդի առավոտյան եկեղեցում օրհնվում են ուռենու, ձիթենու ճյուղերը և բաժանվում հավատացյալներին:

Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և իր վերջնական իմաստով՝ վերադարձ առ Աստված: Զատիկը, թե Հին և թե Նոր Կտակարաններում, համարվում է մեծագույն տոներից մեկը: Այն կապված է ազատագրության և փրկագործության պատմական զույգ իրողությունների հետ:

Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի.

այսպես են միմյանց ողջունում հայերը Զատիկի օրը: Ըստ ավանդույթի՝ սեղանին անպայման պետք է լինեն ներկած հավկիթներ, ձկնեղեն, չամիչով փլավ և գինի, նաև տապակած բանջարեղեն, վերջում՝ թանձր եփած թանապուր: Հավկիթները ներկում են կարմիր, քանի որ հավկիթը խորհրդանշում է երկիրը, իսկ կարմիր գույնը՝ Քրիստոսի արյունը:

Սուրբ Զատկին Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում մատուցվում է պատարագ, բաժանվում են հավկիթներ, տրվում է Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը:

Ուսուցողական

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՐՔ

Արդեն 15 տարի ավանդական դարձած Մանկական գրքի շաբաթն օրերս մեկնարկեց Տավուշի մարզում՝ Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ:

Այդ առիթով Տավուշի մարզպետ Ա. Դուլարյանն ընդունել է Հայաստանի գրողների միության նախագահ Է. Միլիտոնյանին, նրան ուղեկցող մանկագիրներին և գրականագետներին: Մանկական գրքի շաբաթի մասնակիցներն այցելեցին Իջևանի թիվ 1 հիմնական դպրոց, որտեղ աշակերտներով և ուսուցիչներով լեփ լեցուն դահլիճը սպասում էր նրանց: Բանաստեղծները կարդացին իրենց հեղինակային ստեղծագործություններից:

«Ծիծեռնակ» ամսագրի և «Կանչ» թերթի խմբագիրները հույս հայտնեցին, որ երեխաները, ծանոթանալով բաժանված մամուլին, ոչ միայն կընթերցեն, այլ նաև կբաժանորդագրվեն, կդառնան ակտիվ թղթակցողներ: Է. Միլիտոնյանը նշեց, որ միայն դասագրքերով դժվար է իմանալ ու ճանաչել Հայաստանում ապրող ստեղծագործողներին, իսկ մամուլում ոչ միայն գրողների ստեղծագործություններն են տպագրվում, այլ նաև ակտիվորեն թղթակցող դպրոցականների:

Մանկական գրքի շաբաթին մասնակցում էին նաև մարզի գրողներ Ս. Բեգլարյանը, Թ. Մաիլյանը, Զ. Պետրոսյանը և ուրիշներ: Դպրոցի սաների կատարմամբ հնչեցին ներկա բանաստեղծների ստեղծագործություններ: Հյուրերը դպրոցին նվիրեցին հեղինակային և մանկական ու գեղարվեստական գրականություն, ամսագրեր ու թերթեր:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջում, ամեն տարի, ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ, նշվում է ապրիլի 7-ը՝ Մայրության և գեղեցկության տոնը: Ամեն տարի միջոցառումները յուրօրինակ դրսևորումներ են ունենում, քանի որ ուսխորհուրդը միշտ համալրվում է շնորհաշատ ուսանողներով:

Վերջերս կազմակերպված միջոցառումը ևս քոլեջի գեղեցիկ սեռի ներկայացուցիչների օրը հանդիսավոր տոնի վերածեց: Ուսխորհրդի անդամների, ինչպես նաև քոլեջի լավագույն բարեկամ՝ Էրեբունու մշակույթի տան մանկապատանեկան համույթի սաների մասնակցությամբ, միջոցառումն անցավ հետաքրքիր ու բովանդակալից: Ասմունք, ուրախ երգ ու պար, ջերմ մաղթանքներ՝ ուղղված կանանց, ներկա ու ապագա մայրերին: Ակտիվ մասնակցություն ունեցան քոլեջի ուսանողներ Հ. Կարապետյանը, Ս. Անտոնյանը, Զ. Կարապետյանը, Ք. Դավթյանը, Ս. Գևորգյանը, Հ. Մխիթարյանը, Ս. Կարապետյանը և ուրիշներ: Նրանց խոսքն անկեղծ էր, երգը՝ սրտաբուխ: Ուսանողների խոսքի մեջ սեր կար, հուզմունք ու խոնարհում, ինչը ներկա կանանց և աղջիկների սիրտը լցրեց գարնանային ջերմությամբ ու սիրով:

Միջոցառման ավարտին ուսխորհրդի նախագահ Ի. Նիկողոսյանը բոլոր կանանց և աղջիկներին իր բարի մաղթանքներն ուղղեց: Քոլեջի տնօրեն Ռ. Թովմասյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ կազմակերպած հետաքրքիր միջոցառման համար, շնորհավորեց կանանց և աղջիկներին՝ մաղթելով սեր, երջանկություն և խաղաղ երկինք:

ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ

Արմավիրի ջրամբարների տարածքը շուտով կդառնա կանաչապատ ու հաճելի վայրերից մեկը:

Արդեն 4-րդ տարին է, «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից այս տարածքը ծածկվում է պտղատու և դեկորատիվ ծառերով: Նոր Ակունք ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Արտավազդ Թորոսյանի խոսքով՝ հիմնական նպատակն է՝ ապագա սերնդի համար ստեղծել ծառածածկ ու գեղեցիկ վայր: Ծառատունկն իրականացնում են ընկերության աշխատակիցները: Դրան օժանդակում է նաև Արմավիրի մարզպետ Աշոտ Դահրամանյանը: Այգին այս անգամ համալրվել է 200 դեղձենիով: Ինչպես նշեց Արտավազդ Թորոսյանը, ծառերի թիվն անցել է 2000-ից:

«Նոր Ակունք» ՓԲԸ-ն, հավատարիմ մնալով իր նախաձեռնությանը, կշարունակի կանաչապատ տարածքի ընդլայնումը Արմավիրի ջրամբարների տարածքում:

Ս.Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

Նռան օգտակարությունը

Նուռը ոչ միայն համեղ է, այլև ունի մի շարք օգտակար հատկություններ: Նուռն ունի երիտասարդացնելու հատկություն: Այն պարունակում է մեծ քանակությամբ հակաօքսիդանտներ, որոնք կանխում են օրգանիզմի վաղաժամ ծերացումը: Նուռը խթանում է երիկամների աշխատանքը: Ըստ մի շարք հետազոտությունների՝ նռան մեջ առկա նյութերը երիկամները պաշտպանում են տոքսիններից:

Նուռը և նռան հյութը պարունակում են մեծ քանակով վիտամին C, որը բարձրացնում է դիմադրողականությունը և օգտակար է հատկապես ձմռան ու գարնանը: Նուռը կանխարգելում է սիրտ-անոթային հիվանդությունները, օգնում է օրգանիզմին ոչնչացնել անոթներում գտնվող ազատ ռադիկալները, ինչն էլ իր հերթին նվազեցնում է մի շարք սրտային հիվանդությունների ռիսկը: Նուռը կարգավորում է արյան ճնշումը, օգնում է այն նորմայի սահմաններում պահել, հատկապես, երբ այն բարձրանում է յուղալի ուտեղիքները չարաշահելու պատճառով: Այն ոչ միայն ալերգիա չի առաջացնում, այլև նվազեցնում է դրա հավանականությունը այլ մթերքների հանդեպ: Նուռնօգնում է նաև մաշկի քաղցկեղի պարագայում, քանի որ այն կանխում է քաղցկեղածին բջիջների աճը: Որոշ մասնագետներ նաև պնդում են, որ նուռը նվազեցնում է քաղցկեղի առաջացման հավանականությունը: Այն հայտնի է իր քիչ կալորիաների պարունակությամբ՝ 100գ. նուռը պարունակում է ընդամենը 83 կալորիա, գրեթե այնքան, որքան 100գ. խնձորը: Օգտակար միներալների և վիտամինների պարունակությամբ էլ նուռը քիչ է զիջում խնձորին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ

ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

ԱՆԱՆՈՒԽ

Անանուխը շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող կոծղարմատավոր, բազմամյա խոտաբույս է:

Մշակովի անանուխն ունի հակադիր, սուր ատամնավոր եզրերով, ձվաձև կամ նշտարաձև տերևներ, կարմրավուն ծաղիկներ: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, բազմանում վեգետատիվ եղանակով: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր և պահանջկոտ լույսի նկատմամբ: Լավ աճում է 18-22 աստիճանի պայմաններում, իսկ շոգ եղանակներին աճը խիստ դանդաղում է:

Բույսի ցեղի «մենթա» անվանումը ծագել է հին հունական դիցաբանության հավերժահարս Մինթայի անունից, որին բուսաշխարհի աստվածուհի Պերսեփոնեն դարձրեց անանուխ՝ Աֆրոդիտեին նվիրելու համար:

ԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները: Հումքը հավաքում են ծաղկման սեզոնին, մի քանի ժամ թողնում արևի տակ, հետո լրիվ չորացնում քամահարվող, հով տեղում: Մշակված հումքը պահում են փաներային արկղերի մեջ: Դեղաբույսը բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքի, այլև նրանից ստացվող եթերայուղի և վերջինիս հիմնական բաղադրիչ մասը կազմող մենթոլի ձևով: Միջնադարում համարում էին, որ անանուխի հոտն ակտիվացնում է ուղեղի աշխատանքը:

Ամիրդովլաթը նշում է, որ անանուխը կամ նանան օգնում է գլխացավի, բերանից սխտորի կամ սոխի հոտի անցկացմանը, վերացնում մարսողության խանգարումը, դադարեցնում արյունահոսությունը, օգնում սրտխփոցին, շան կծածին, կարիճի և մեղվի խայթածին:

Բույսի եփուկը և կաթիլները լոգանքների ձևով օգտագործում են երեխաների ամենաքսաղիքային տրակտի խանգարումների ժամանակ: Տարբեր ազգերի ժողովրդական բժշկության մեջ հիմնավորված է, որ անանուխն ավելացնում է ստնտու մոր կաթը: Տերևների թրջոցն օգտագործում են ռևմատիկ հոդացավերի ժամանակ:

ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Չրաթուրմ պատրաստելու համար 2 ճաշի գդալ մանրացրած թարմ հումքը 30 րոպե թրմել 1 լ եռման ջրում, քամել և գոլ վիճակում ըմպել 1 օրվա ընթացքում:

ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Անանուխը լայնորեն կիրառվում է սննդի մեջ: Այն ավելացնում են կարկանդակին, աղցանին, պանրին, բանջարեղենով և մսով ճաշերին: Նրանով համեմում են թեյը, կվասը, լիկյորը, հրուշակեղենը, ծխախոտը, օգտագործում են նաև կոսմետիկայում: Բույսը մեղրատու է: Ստացված մեղրը սաթագույն է, հաճելի բույրով ու համով և դեղաբույսին հատուկ բուժիչ հատկանիշներով:

ՀՐԱՇՔ ԿԱՆԱՉ ԲՈՒՅՍԸ

Սպանախի օգտակար հատկություններն ապահովում են աչքերի լավ տեսողությունը, արյան նորմալ ճնշումը, մկանների ամրությունը, մաշկի պաշտպանվածությունը, նյարդային համակարգի առողջությունը, ոսկորների հանքայնացումը, կանխում է կատարակտը, աթերոսկլերոզը, ինֆարկտը, ունի հակաքաղցկեղային և հակախոցային հատկություններ:

Սպանախը հարուստ է հանքանյութերով՝ կալիում, մանգան, ցինկ, մագնեզիում, երկաթ, կալցիում: Սպանախը պարունակում է այնպիսի վիտամիններ, ինչպիսիք են՝ ֆոլիևյան թթուն, նիացինը և A, B_6, C վիտամինները: Մյուս կարևոր սննդարար նյութերից են թիամինը և ռիբոֆլավինը, որոնք կարևոր դեր են խաղում օրգանիզմի ամենօրյա ֆունկցիաների կատարման համար: Գունանյութերից՝ սպանախը պարունակում է բետա-կարոտին, լյուտեին, քսանթին և քլորոֆիլին: Սպանախի առավելությունը նրանում է, որ այն չի պարունակում ճարպեր և ճարպային բաղադրիչներ: Սպանախը կարող եք օգտագործել հում կամ խաշած վիճակում, քանի որ նրա սննդարար հատկությունները երկու դեպքում էլ պահպանվում են:

Այն կարող է զերծ պահել վիտամին A-ի պակասի դեպքում առաջացող հիվանդությունից, քոր եկող աչքերից, աչքի խոցից և չոր աչքերի ախտանիշից: Սպանախի մեջ առկա ֆոլիևյան թթուն ցածրացնում է արյան ճնշումը և հանգստացնում արյունատար անոթները՝ պահպանելով արյան կանոնավոր հոսքը: Սպանախի մեջ առկա հակաօքսիդանտները մեծ դեր են խաղում մկանները, հատկապես՝ սրտի մկաններն ամրացնելու մեջ, կանխում են նաև շատ այլ սիրտանոթային հիվանդություններ՝ հիպերլիպիդեմիա, բարձր ճնշում, սրտի անբավարարություն և կորոնարյան անբավարարություն:

Սպանախում առկա միկրոտարրերն ու ֆոսֆորն ամրացնում են ոսկորները: Սա էլ իր հերթին՝ կարող է կանխել ոսկորների օստեոպորոզը: Պարզվել է, որ սպանախը և մի շարք այլ բանջարեղեններ պաշտպանում են ստամոքսի լորձաթաղանթը՝ կանխելով ստամոքսի խոցի առաջացումը: Սպանախն իր կարևոր հատկություններով հանդես է գալիս՝ որպես հակաքաղցկեղային հիանալի դեղամիջոց: Այն կանխում է միզապարկի, լյարդի և թոքերի քաղցկեղը:

Սպանախը համարվում է սպիտակուցների աղբյուր, իսկ նորածնի մարմնի աճի և զարգացման համար կանանց անհրաժեշտ է սպանախ ուտել:

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՐՈՂ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՁԵՋ ՀՈՒՉՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:
Հարցերը կարող եք ուղարկել E-mail: asrc@cln.am էլեկտրոնային հասցեին:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատրաշ» կազմակերպությունները:

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Լիանա Շախնազարյան

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 30
ստորագրված է տպագրության 14.04.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա